

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакція «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ՆԵՐԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

## „ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ Արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եոթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆԸ:  
Օտարաբարձրացրիներ պետք է դիմել հետևեալ հասցեով՝ Тифлисъ, Редакція «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

### ԲՈՎԱՆԻՆԿՈՒԹԻՒՆ

Արիտակէս եպիսկոպոս Սեդրակեան. վերջին տեղեկութիւնները Տարօնի մասին. Հայոց հարցը և եւրոպական մամուլը.— ՆԵՐԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երէկայ աղետը. Նամակ Թէօօրոսիայից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՍՍԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թուսա Հէօօրլի. Ֆրանսիական պատգամաւորների ժողովը. Նամակ Նիւօրքից. Նամակ Պարսկաստանից.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Գրողի օրագրից.— ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.— ԲՈՐՍՍ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Թիւրքիայից:

### ԱՐԻՍՍԱՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՎՐԱԿԵԱՆ

Հայոց կաթողիկոսի ամենախոնարհ առաջարկութեան համաձայն, Թագաւոր կայսրը բարեհաճել է Արիտակէս եպիսկոպոս Սեդրակեանին Աստրախանի թեմի առաջնորդ նշանակել, ի հարկէ, նախօրօք, համաձայն օրէնքի, արձակելով սինօզի անդամութիւնից:

Մեր անչափ ուրախ ենք, որ այդպիսով Արիտակէս եպիսկոպոսը կը հեռանայ Էջմիածնից, ուր նա, շրջապատված ամենա-

աննպատ հանգամանքներով, վանական ինտրիգներով և հայկական սե նախանձով, անգործութեան էր մասնակցած, և մտնելով ժողովրդի մէջ, սոք զնելով կենդանի մարդկանց շրջանում, կը սկսի գործել յօգուտ ժողովրդի, որին կըչված է ծառայելու ամեն մի հոգեւորական:

Գործունայ, ընդունակ, հասարակական գործունէութեան ձգտող հոգեւորականի համար՝ Էջմիածնը շատ և շատ նեղ է: Վանական խեղդող մթնոլորտում օրինաւոր մարդը, փոխանակ գործելու, ստիպված է զբաղվել սե ինտրիգների դէմ կռելով: Ահա այդ է պատճառը, որ նոյն Արիտակէս եպիսկոպոս Սեդրակեան, որ ժողովրդի մէջ եղած ժամանակ, երբ Թիֆլիսի թեմի առաջնորդ էր, մի քանի տարում ահագին գործեր կատարեց, անջնջելի յիշատակներ թողեց, Էջմիածնի վանքում նա ստիպված էր մեծ մասամբ կռիւներ մղել այնպիսի մարդկանց դէմ, որոնք նրան հասկանալու ընդունակութիւն անզամ չունեն, անկարող լինելով անել այն, ինչ որ ընդունակ է անել իր գործը խելով, անընկճելի կամքով և բարձր ձգտումներով:

Երջանիկ է Աստրախանի թեմը, որ բաղդ է ունենում առաջնորդ ունենալու մեր հոգեւորականութեան ամենաակնաւոր ներկայացուցչին: ձմարիս է, աստրախանցիներին համար շատ ծանր է բաժանվել խորէն եպիսկոպոս Ստեփանէից, որ հապիւ մի քանի ամիս մնալով այդ թեմում, կարողացաւ զբաւել ժողովրդի սէրը, բայց մի բանով միայն կարող է միջնորդել Աստրախանի թեմը, որ խորէն եպիսկոպոս Ստեփանէից յետոյ գալիս է մի այնպիսի մարդ, ինչպէս է Արիտակէս եպիսկոպոս Սեդրակեան:

Մենք համոզված ենք, որ սրանից յետոյ Աստրախանի թեմը նախանձի առարկայ կը դառնայ մեր ուրիշ թեմերի համար, քանի որ նրա հոգեւոր գործերը գլուխ է անցնում այն մարդը, որ ընդունակութիւնները և արժանաւորութիւնները խոստովանում են ոչ թէ միայն նրա անթիւ համակրողները, այլ նոյն իսկ նրա թշնամիները իրանց սրտի խորքերում:

Կրկնում ենք, մենք նոյնքան ուրախ ենք

### ԵՐԵՎԱՆԻ ԻՐԻՒՆԸ, ՈՆ ԱՍԵՆ, ԿՐ ՍԵՂԵԿԱՅՈՒԹԻ ԹԷ

Երեւանի իրիւնը, ուն ասեն, կը տեղեկացուի թէ վիճակը շատ ծանր է և փրկութիւնը յուսանալու անհրաժեշտ է: Սպանիաներէն ոչ մէկը ձեռքազուտած է, թէն տեղացիներէն քանի մը՝ հոգի ոտիկանութեան դուռը տարուեցան:

Թիւթիւնիէֆիին անուրը զփարգաբար երեք տարի է շատ ծանօթ է ամենու, և սակայն մեղի համար այդ տարօրինակ մասնիչին հոգեբանութիւնը մեծ գաղտնիք մըն է: Երեք տարի առաջ էր, 1892-ի ապրիլին մէջ, որ յանկարծ օր մը Պօլիս շուկ մը տարածուեցաւ թէ Գաւրուրի արեւելէն Թիւթիւնիէֆի անուն մասնիչ մը ձամբայ երեք Պօլիս եկեր է. նախապէս Նազը մին հաղորդած է շատ մը կարեւոր նամակներ, որոնց փոխարէն իր ձամբու ծախս 500 ռուբլ առած է, և երբ հոս աւելի մեծ ծառայութիւններ մատուցանէ, իր ստանալիք փոխարինութիւններն ալ աւելի մեծ պիտի ըլլան:

Ո՛վ էր այս մարդը, թուկից կուզար, ինչու կը մատնէր և օրին մատնէր: Վերջին հարցումին պատասխանը ամենէն դիւրինն էր, իր զոհն էր շեմարանի նախկին աշակերտ մը, Պետրոս Տօնապետեանց, որ Պօլիս գրական հրատարակչին վրա ծանօթ էր, ինչպէս նաև կեղծ անունով մըն ալ՝ ձեռ կողմերը: Այդ երիտասարդը յարաբերութեան մէջ մտած էր Թիւթիւնիէֆի հետ և նամակագրութիւն ըրած. այդ նամակներն էին որ մատնիչը կը զրկէր նախարարութեան իր երախտը մը. Տօնապետեան ձեռքազուտեցաւ

Արիտակէս եպիսկոպոս Էջմիածնից հեռանալու համար, որքան նրա հակառակորդները: Տարբեր են միայն մեր ուրախութեան պատճառները: Նրանք ուրախ են, որ Էջմիածնից հեռանում է Սեդրակեան, որովհետեւ նրա հեռանալուց յետոյ՝ ազատ կը լինեն ամեն բան անելու, իսկ մենք ուրախ ենք, որ Էջմիածնից հեռանալով, Սեդրակեան եպիսկոպոսը ազատված կը լինի շրջապատող անվերջ ինտրիգներից, ազատված կը լինի վանքի խեղդող մթնոլորտից, և ժողովրդի մէջ մտնելով՝ կը սկսի գործել և օգտուէտ գործեր կատարել:

Ներքին Աշտարակեցին իր ամենալաւ գործերը կատարեց ժողովրդի մէջ, և ոչ թէ Էջմիածնի վանքում:

### ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Մուշից ստացվող նամակները սարսափելի դուրսերով են նկարագրում տեղացիների դրութիւնը: Այն թշնամութիւնը, որ տիրում է մասնեղական և քրիստոնեայ տարբերի մէջ, իր գազախալէտին է հասել:

Չը նայելով եւրոպացի դեկլարաների ներկայութեանը, կատարի ամբողջ էլի հազարաւոր սպառնալիքներ է թախում հայերի դէմ: Մասնեղականները բացարձակ դուռն, գուռն են, «Երբ «դեպուտները» դուրս կը գնան երկրից, ոչ Միջոց նախնաք արեւան մէջ կը լողայնեն»:

Տարօնի տեղական ժողովուրդը թէն շատ քիչ ցանքս արել է, բայց, այնու ամենայնիւ, դրա արդիւնքն էլ վաղեկու ապահովութիւն չունի: Համբերութիւնը հասել, զանալը ոսկորին է հասել: Գաւառացին իր ունեցած չունեցածը կերել սպառել է անտուն, սգաւոր սասունցի երբոր հեռու, և հետեալեւ, սպոր երկուսն էլ մի և նոյն վիճակ ունեն, ճիշդ ասած, ոչինչ վիճակ չունեն: Հայի արժէքը համեմատաբար սկսել է էփանալ նախ. տեսնենք, մինչև նոր հունձը ինչ կը դուրս գար:

Ո՛չ որ վաղվայ համար չէ մտածում, ճիշդ այնպէս, որպէս աւետարանն է ասում.— «Մի հոգաղէք վաղիւն, զի...»

Ի՛նչ աղիողորմ տեսարան,— արեւը ցամաքած,

ու մինչև հիմա Աքիայի մէջ բանտարկուած է: Այս միջոցին Թիւթիւնիէֆի Պօլիս եկաւ, ու ոտիկանութեան դուռը և յետոյ արտաքին գործերու նախարարութեան մէջ պաշտօն ունեցաւ. քանի մը լեզուներու տեղեկ էր և կը թարգմանէր մասնաւորապէս կովկասեան մասնալին այն հատուածները, որոնք ուղղակի կը վերաբերէին կառավարութեան: Ժամանակաւ մեր ամեն գործերուն տեղեկ ըլլալով վարպետ առաջնորդ մը կրնար ըլլալ ոտիկանութեան:

Ի՛նչու այդ մարդը, որ արուեստով վերաբոյժ էր, կապրէր ազատ միջավայրի մը մէջ, ստորնացաւ այդպիսի վատութեանց, ահա գաղտնիք մը, որ կը մնայ անթափանցելի. դաւաճութիւններ ունեցեր է եղեր իր գաղափարակիցներէն, բայց վրէժ լուծել մասնութեամբ, այդ անհասկանալի է: Թիւթիւնիէֆի անցեալը շատերուն ծանօթ չէր, իր անունը նոր կը հնչէր պօլսեցիներուն ականջին, բայց շատով վարժուեցան անոր: Յետոյ սկսաւ գրականութեան մը վրա զբաղել, ասողը արտասովոր զբոյժի մը հրատարակեց և վիպակ մըն ալ. կուզէր իրեն համբաւ մը չինել գրականութեան մէջ:

Անգամ մը առիթ ունեցայ ձամբան զինքը տեսնելու. դէմքը կը պատէր տխուր մեղամար ձուլիւն մը, որ կրնար շատ գրաւիչ ըլլալ. եթէ չըսէին, որ դիմացիդ Թիւթիւնիէֆին է: Լուսնու մեծը անձաւորութիւն մը, ինչքն իր մէջ ամբողջ անձաւորութիւն կը լինէր, որ խղճ-ամբողջութեամբ իր ծանօթները կըսէին, որ խղճ-

ասկ ցնցոտիներով պարուրված, և մերկանդամ լաճերը գրկած, մշուհներ նստել իրանց դարի պ և աքսորված որդիբանց դառն օրերը կեղերբղեն:

Պանդխտութիւնն կրկնվում է: Մի ստակալի ցաւ բաղմաթիւ զոհեր է տանում Տարօնի դիւղերում. այդ ակտը հետեանք է խիստ անօթութեան, և բուսեղէն ուտելուն:

Գ. Մ.

### ՀԱՅՈՑ ՀԱՐՅՈՒ ԵՒ ԵՆՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻՆԸ

I  
Լօնդօնից «Нов. Время» լրագրին հեռագրում են. «Չամաղան հակասական լուրեր են պատում այն ուղղութեան մասին, որ մարկիզ Սոլբրի կը բռնի արտաքին քաղաքականութեան մէջ: Մի քանիները կարծում են, որ նա կաշխատի խեղդել հայկական ազիտացիան և հերթից հանել հայոց հարցը. իսկ ուրիշ աղբիւրները ստացված տեղեկութիւնների հիման վրա շատերը կարծում են, որ մարկիզ Սոլբրի, ընդհակառակն, եռանդով կը պահանջի, որ ընթացիկ ներ մոցնվեն ասիական Թիւրքիայի հայաբնակ նահանգներում, կաշխատի հաստատուն հիմքերի վրա դնել բրիտանական ազդեցութիւնը և ձեռք բերել Անգլիայի համար առանձին շահեր և արտօնութիւններ»:

### II

Պարիզում հրատարակվող «Now-York Herald» լրագրին հեռագրում են Նիւ-Եորքից, յունիսի 21-ից, որ լրջրումի ամերիկական փոխ-հիւպատոս նշանակված է Բօրնթո Չըլթօն, իսկ Խարբերդի փոխ-հիւպատոս՝ Ուիլիամ Հընտեր:

### III

Լօնդօնից հաղորդում են Պարիզի «The Galig-nani Messenger» լրագրին, յունիսի 18-ից, հետեւեալը. «Այսօր Գաւառ քաղաքում կարանաւորեցին մի կ. պօլսեցի պարոնի, որ ձառեր էր խօսում և փող էր հաւաքում հայ քրիստոնեաների օգտին: Կասկածում են, որ նա խաբել է աստուածաբանութեան շատ պրօֆէսորների: Նա լաւ է հագնված և զեղեցիկ խօսում է անգլիէրէն: Նա նորերս հրաւեր կարգաց երիտասարդ կանանց գնալ Պօլիս»:

մտանքի ստակալի ամենամեծներով կը տատապի: Բայց անգամ մը գլորած էր ու չիկար փրկուութեան պարան մը. իր յանցանքը քաւելու համար «մեծ գործ մը» պիտի ընէ կըսէին. ու ամենքս ալ կը սպասէինք. մասնութեան քառութիւն չի կայ, բայց եթէ արիւնով: Այդ արեւը ինքն իր երակներէն կրնար հանել, կատարելով մեծ գործ մը, ու թերես այն ատեն իրեն համար զթութեան արցունք մը ունենայինք, բայց շատ ուշացաւ: Գնտակ մը խնդրը լուծեց:

Եւ հիմա մասնուան մասիճին մէջ, երբ քահանան կը բերէր իրեն Հաղորդութիւնը, որ հասարական մասնիչը սրտին խորէն կըսէր. «Վզգիս մեղայ, Աստուծուս մեղայ»: Աւաղ, Աստուած ինչ զիտէ ինչ պիտի ընէ, բայց աղբը այդ «մեղայ»-ին իր պատասխան ներում ու արձակում չի տար. վասն զի Թիւթիւնիէֆի մաճը կամաւոր չէր, ուստի և ոչ ալ քառութիւն մը: Ու Տօնապետեան դեռ յանուն է:

Սե քող մը ձգնէր այդ զէպրին վրա և դառնանք մեր գործերուն:

«Միւնէ սիւն կեանք կայ, կըսեն տաճիկները» կը գրէի նախորդ նամակով մը, յիշելով մեր ինչքին համար կառավարութեան բռնած ընթացքը, որով ժամանակ կուզէր վաստիկ: Հիմա իրենք անգամ մը ևս կը հաւատան իրենց այս առանձին ճշմարտութեանը: Հեռագրը երկու օր է մեզ կը զբաղեցնէ: Անգլիայի նախարարութեան փոփոխութեամբ: Պահպանողական կուսակցու-

IV

Ամերիկայի Նիւ-Եորկ քաղաքի «World» թերթում տպագրված է մի մանրամասն յօդուած...

V

Լճագիտի «Daily Graphic» լրագրին գրում են Կ. Պոլսից, որ քննիչ յանձնաժողովի կարգապահ...

VI

Կ. Պոլսի բրիտանական դեսպանատան երկրորդ քարտուղար Ռեճինալդ Լապլեթը կանչվել է...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԵՎ ՆԵՍԵՐ

Ներքի, յունիսի 21-ին, երեկոյան 5 ժամին, Մէյրանի մօտ, սեղի ունեցաւ մի մեծ զօրադաշտ...

Այդ շինութիւնը պատկանում է իշխան Գաւթի Ալեքսանդրովիչ Սուլթանովին, մի վերին աստիճանի հին և խորխուր շինութիւն: Գեռ առաջին անգամ, 1894 թվի նոյեմբերին, դառաւ իր բնակարանը...

Եւ ահա երէկ, խորխուր, ճեղքված շինութիւնը փլեց, իր տակը թողնելով մի խուռ անմեղ մարդիկ: Անմիջապէս զօրադաշտի տեղը եկան նահանգապետ իշխան Երվանդի, սրբազանը, սպիտակաթոշակի օգնական Սօկոլովսկի, քննիչը և անազնուր բազմութիւն:

Արեւելի փորձաքննիչը դիակները հանելու համար: Մինչև երեկոյան 8 ժամը աւերակները...

Թեան գործի գլուխ անցնելը ուրախութեամբ կը ընցնէ բոլոր թիւրք սրբերը. կառավարական շրջանակները ցնծութեամբ մէջ են, և ժողովուրդը չի գիտեր ինչ ընել ուրախութեան: Եւ սակայն մեծ ալ կրնանք յիշել մեր հին առածը. «Աղբաքնն կեալ խնդրացիք, բեռը բացիք վրան լացիք»: Արեւմտեւ յուսով թէ թիւրքերն ալ իրենց ուրախութիւնը պիտի մտանան, երբ Անգլիոյ նոր նախարարութիւնը բանայ իր բերանը: Չեմ ուզեր երկարօրէն խօսել, բայց սաչափը կրնամ ըսել, որ դեռ քանի մը շաբաթ առաջ դեսպանական շրջանակներէ խօսակցութեան մը առթիւ կը յայտարարուէր Պատրիարքին թէ հայոց խնդրին արդի վիճակին մէջ անգլիական պահպանողական նախարարութիւնը շատ օգուտներ պիտի ընէ: Այս հասանկանութեան սպասելով հանդերձ ըսեմ թէ քանի մը օր առաջ Պոլսի հասած լուրերը կը հարցադէին, որ Միջերկրական անգլիական նախարարը հետզհետեւ աւելի ստուարաթիւ կը լայցայ: Այս լուրը մեծ իրարանցում պատճառեց կառավարական շրջանակներու մէջ:

ՆԱՍՏԱԿ ԹԻՎԳԻՒՅՑԻՑ

II

Բասեն, մայիսի 24-ին

Մեր աւերված երկրում առ այժմ, կարծէք, հանդատութիւն է տիրում. բայց այդ ըստ երեւոյթի հանգիստ ու խաղաղ դրութեան մէջ ան-

տակից հանցեցին 8 հոգի, որոնցից 4-ը արդէն մեռած, իսկ 4-ը ծանր վիրաւորված: Սպանվածներն են՝ Սարգիս Մարտիրոսեան, 20 տարեկան, Միխայէլ Չինչարաձէ, 50 տարեկան (ինչ զաւակներ ունի), Խահակ Գէորգեան (մեծ ընտանիքի տէր), Աւետիս Մուշեղեան (ընտանիքի տէր): Ծանր վիրաւորվածներն են՝ Արտեմ Տէր-Ոսկանեան, Արչիլ Գօլաձէ, Վանօ (ազգանունը չայտնի է), չորրորդի անունը մեղ չայտնի է: Այսօր փորձաքննիչը պէտք է շարունակվեն: Ենթադրում են, որ աւերակները տակ դեռ էլի դիակներ կան: Գծադրութեան տեղը հաւաքված էր անազնուր բազմութիւն: Զաւարթութիւնը վերին աստիճանի ծանր է:

ՆԱՍՏԱԿ ԹԻՎԳԻՒՅՑԻՑ

Յունիսի 6-ին

Սև-ծովի ափին Թէօքոսիան թէպէտ փոքրիկ, բայց գեղեցիկ քաղաքներից միսն է համարվում: Գիրքը գեղեցիկ է, օդն ու ջուրը ստույգարար, այնպէս որ բժիշկների խորհրդով ոմանք այստեղ բժշկվելու են գալիս: Առետուրն այժման էլ աջող է, արտահանվում է փոքր քանակութեամբ հաց. առում են Թէօքոսիան շուտով նաւահանգիստ կը դառնայ:

Այստեղ սարում են մօտ 80 տուն հայեր, որոնք մեծ մասամբ առետուրով են պարասպում: Կովկասեան գիւղերի առետուրը բացառապէս հայերի ձեռքին է: Հայերն այստեղ ունեն երեք, ներքուստ կոկիկ եկեղեցիներ, որոնցից մէկը ներքը զարդարում են մեր հռչակաւոր մարինիտ Յ. Ալվազովսկու հետեալ նկարները—Առաքեալներ Պողոս և Պետրոս, Տրդատի մկրտվելը, Տիրամայրը, խորհրդաւոր ընթերցը, Յիսուս Գեթեմանի պարտիզում և ուրիշները:

Շաբաթ է կիրակի օրերը եկեղեցիներում երգում են զարդեցի աչակերանները և աչակերանահիները: Եկեղեցիներից մէկի գաւթուան է ծխական միջատեան ուսումնարանը, ուր այս տարի սովորում էին 45-ի չափ տղաներ և օրիորդներ: Ուսումնարանը նկարիչ Ալվազովսկուց տարեկան 100 ռ. նպաստ է ստանում:

Ալվազովսկին ունի իր տան կից և քաւէ-բէա, ուր իր ցոյց են դրված 40 նկարներ, մուտքը 20 կօպէկ է և արդիւնքը յատկացրած է սեղիս Բարեբրտական ընկերութեանը:

Հռչակաւոր խալիպեան ուսումնարանն այժմ ինստիտուտ է. տարեկան 1200 ռ. վարձով է տրված, որը Նոր-Նախիջևանի հայոց զարմանոյն է ստանում: Գարոցի չորրջը անազնուր դեպի կայ, որը քաղաքն ուղում է սեփականացնել, իսկ հայերն ուսումնարանին են համարում: Որքան կարողացանք իմանալ, գործը դատարանին է յանձնած:

Ս.

Պամենից ասով աչիւն է զարնում հարկերի ծանրութիւնը, որն արտաշարվում է զարհուրելի թւերով: Եթէ մի կողմ թողնենք հայ ժողովրդի կրած նիւթական ու բարոյական զրկանքների հարիւրաւոր, այլ և այլ տեսակները, նոյն իսկ կառավարութեան առած հրէշաւոր սուղբերը անսպասու ամսաշաբաթների և մի և նոյն ժամանակ արագ բողբոխ անկելը առիթներ են ներկայացնում:

Այն գիւղը, որտեղից հարցրում ենք այս տեղեկութիւնները, հայրը 100 տուն ունի, և վճարում է միայն կառավարութեանը մօտ 2000 ոսկի, այսինքն ամեն տուն 20 ոսկի, ուսաց փողով մօտ 160—170 ռուբլի (ոսկին 8 ռ. 50 կ. հաշուելով): Տուն կայ, որ վճարում է 70 ոսկի, ուրեմն 600 ռուբլի հարկ, այն էլ գիւղացու տուն, և այն մուրացիկ, թշուառ Թիւրքիայում:

Հարկը վերցնում են մի այլանդակ եղանակով, որը յաճախ աւելի զգալի ու ծանր է լինում գիւղացու համար, քան թէ նոյն իսկ իրական հարկի քանակութիւնը: Հարկահանները գիւղացու ամսից վերցնում են ամեն քան, վերցնում են կիսագումով: Հէնց այսօր հարկահանը հրամայել է իր մարդկանց վաճառել գիւղացիների տան իրեղենները, ինչ որ ձեռքբեր կընկնի, և եթէ ոսկի չը կայ, կէս գումով վերցնել, միայն թէ ոչ

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունիսի 8-ին

Կատարել մի ապօրինի գործ և ապա քաջութիւն ունենալ հրատարակութեան, զանազան աջակապութիւններով այդ գործը հասարակութեան առջև օրինաւոր ներկայացնելու,—դա մի յանդիմութիւն է, որին միայն ճարտարապետ Նիկողայոս Գրիգորեանները ընդունակ են: Ահա մի մարդ, որ կամենում է ուրիշի հաշուով բարերար հռչակվել:

«Մշակի» 14-րդ համարում լոյս տեսաւ «Մեր-դպեան, թէ Գրիգորեան զարդ» վերնագրով մի յօդուած, որի մէջ հեղինակը պաշտպանում է իմ հանդուցեալ ամուսնու յիշատակը և իմ իրաւունքը: Իբրև պատասխան այդ յօդուածի, ճարտարապետ Նիկողայոս Գրիգորեան, երկար ժամանակ անցնելուց յետոյ, «Մշակի» 30 և 31-րորդ համարներում տպագրեց մի յօդուած: Իբր թէ քաղելով եկեղեցական զանազան հաշիւներից, նա աշխատում է այդ յօդուածում ցոյց տալ, որ իմ հանդուցեալ ամուսինը այդ զարդի վրա ծախսել է միայն 500 ռուբլի, մինչդեռ ինքը ծախսել է անսպառ թիւով հազար ռուբլիներ: Այստեղից նա եզրակացնում է, որ հետեալը ինքը կարող էր լինել զարդի ինամակալ և զարդն էլ անուանել Գրիգորեան:

Այս անգամ մի կողմ թողնելով այս վերջին խնդիրը, ես կամենում եմ յարգելի հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել հետեալ կէտի վրա:

Այդ յօդուածից յետոյ, ճարտարապետ Գրիգորեանի խաբէութիւնը միանգամայն երևան հանելու համար, ես անսպառ դիմեցի թեմական տեսուչ հայր Մեղեանին, խնդրելով թող տալ ինձ քննել զարդի հաշիւները: Հայր տեսուչը անանձին հրահանգով պատվիրում է Կուկիայի հայոց զարդի աւագ-ուսուցչին խնդրել եկեղեցու երեցփոխից մատենաները, որի մէջ կան իմ հանդուցեալ ամուսնու արած ծախսերի հաշիւները, զարդի և եկեղեցու վրա լրէցփոխ Արքայանան աներծում է:

Այն ժամանակ թեմական տեսուչը դիմում է Թիֆլիսի առաջնորդին, որը յայտնում է, որ ես ինքս այդ մասին խնդրամատոյց լինեմ կօնսիտորիային: Այդպէս էլ արի:

Անցան ահա ամբողջ երեք ամիսներ և դեռ պատասխան չունեմ, չը նայելով որ անձամբ էլ ներկայացնել եմ: Կօնսիտորիան միշտ կրկնել է պատասխան կը տանք, կը տանք... Ինչպե՞րը և մինչև այսօր դարձեալ չեն պատասխանել:

Այժմ, հրապարակով, մամուլի միջոցով հրաւիրում եմ պատասխանել ինձ, ինչի կօնսիտորիան այդքան ժամանակ ձգձգում է խնդիրս. ինչի այդ նոյն կօնսիտորիան ուրախութեամբ բաց է անում մի ոմն Գրիգորեանից առաջ եկեղեցու և զարդի հաշիւները, իսկ իմ առաջ՝ ոչ:

մի տանից չը հեռանալ, առանց ստանալիքը ձեռք բերելու: Վերցնում են ամենից առաջ գիւղացու անտունները, եթէ ունի, որ շատ հազարաւոր է, տան սղինձ-սղինձկալը, փայտաները, մինչև իսկ կաէ սրտուկները և այդ բոլորը վաճառում աննշան գնով, կամ տանում քաղաք (Երզրում) իբր թէ վաճառելու:

Համապարհներ լրա եղած գիւղերում կան երկու-երկու զինուոր, որոնց պաշտօնն է պօսալը ստանալ մի տեղից և յանձնել միւս տեղը: Բայց մեր երկրում սուլթանի ամեն մի պաշտօնեայ կարծես ունի անվերջ պաշտօններ: Այս երկու զինուորներն էլ վարում են ամեն պաշտօն. բռնում են ներս եկող և երկրից դուրս գնացող զաղթականներին և ամեն մէկից փող վերցնելով բաց են թողնում: Գիւղի գործերի համար սրանք զատաւոր են. ձեռնում են գիւղացիներին, հայհոյում, որի առաջին առարկան աւետարանը ու քրիստոնէական հաւատն է, իսկ երկրորդը՝ հայի զօրադը կինն ու աղջիկը: Ուստու, խմում են, ինչպէս կամենում են, զանազան զատարկ պատրաստելով ընակիչներից վերցնում են կաշապը, օրպէս թէ նրա տանը գաղթական է իրած եղել, երկու օր է նրա եղբայրը տանը չէր, կամ ինչու նրա բարեկամը գիւղից հեռացաւ:

Եթէ օր և ից գիւղի շրջակայքում սպանութիւն կամ թալան է պատահում, պատասխանատու է համարվում նոյն այդ գիւղը: Բայց այս դէպքում էլ սպանութեան գինը չէ ստանում:

Թող տան ինձ մատենաները և ես կապացուցանեմ ճարտարապետ Գրիգորեանին, որ ուրիշի հաշուով բարերար հռչակվելը դիւրին գործ չէ և որ երբէք ազնուութիւն չէ անհետացնել ուրիշի յիշատակը՝ իր «ես»-ը փայլեցնելու համար:

Սյրի տիկին Միլոյայեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆՑ

Մենք ստացանք հետեալ հեռագիրը վիեննայից, յունիսի 19-ից, ուսաց գործակալութեան միջոցով. «Polit. Correspondenz» լրագրին Կ. Պոլսից հարցրում են, որ Բ. Գուռը կիսապաշտօնական ձեռով յայտնեց պետութիւններին ցանկութիւն՝ ըստ հուլիսեան ընդունելու առաջ-ֆրանս-բրիտանական բարենորոգումների նախագիծը Հայաստանի համար: Բ. Գուռն միակ նկատողութիւնը վերաբերում է բարձրագոյն կօմիսար նշանակելուն: Բ. Գուռը չէ ցանկանում իրաւունք տալ պետութիւններին, որ նրանք հաստատեն կօմիսարին իր պաշտօնում:

Ներսիսեան զարդի վերջին վեցերորդ դասարանից, այս տարի աւարտեցին հետեալ անձինք:

- 1) Աղաբիրեան Ստեփան՝ վերին աղուցիցի,
- 2) Ամատունի Հայկ՝ ակէքսանդրապօլցի,
- 3) Աւագեան Երուսաղ՝ իրգիբցի,
- 4) Բարսամեան Գասպար՝ ակէքսանդրապօլցի,
- 5) Գալարեան Գաւթի՝ զօրեցի,
- 6) Զուրաբեան Սարգիս՝ լուսեցի,
- 7) Կարապետեան Յովհաննէս՝ ախալքալաքցի,
- 8) Համալեան Երուսաղ՝ կարսեցի,
- 9) Մակարեան Տիգրան, ակէքսանդրապօլցի,
- 10) Մեհրաբեան Գեորգ՝ թիֆլիսցի,
- 11) Մկրտչեան Գարեգին՝ կարսեցի,
- 12) Յովսէփեան Գաւթի՝ ախալքալաքցի,
- 13) Յովսէփեան Ենովք՝ իրգիբցի,
- 14) Շաթիրեան Խաչատուր՝ զղարեցի,
- 15) Պապովեան Ալեքսանդր՝ թիֆլիսցի,
- 16) Ամուսեան Շաւար՝ քաղսիսաբեցի,
- 17) Սողոմոնեան Մովսէս՝ կարսեցի,
- 18) Վախտանգեան Ալեքսանդր՝ թիֆլիսցի,
- 19) Վարդանեան Վասակ՝ զաղարչապատցի,
- 20) Տէր-Գեորգեան Յակօբ՝ թիֆլիսցի,
- 21) Տէր-Խաչատրեան Ներսէս՝ չուլեցի,
- 22) Տէր-Պօղոսեան Աշոտ՝ վանեցի,
- 23) Տէր-Սեմեան Արշալուի՝ համալեցի,
- 24) Փերիկեան Գեորգ՝ թիֆլիսցի,
- 25) Քաչարեան Սարգիս՝ Թուրքիցի գիւղից:

Յունիսի 13-ին Պետերբուրգում վախճանկեց ուսու գրող Ս. Տէրպիգորով, որը գրում էր Սերգէյ Ատալա կեղծ ստորագրութեամբ: Հանդուցեալ Տէրպիգորով ծնվել է 1841 թվի մայիսի 12-ին: Տարածվի գիմնադրույում իր ուսման ընթացքն աւարտելուց յետոյ, նա մտաւ Պետերբուրգի համալսարանը, բայց վաղվեց այնտեղից, երբ ուսանողական յայտնի խառնակութիւններ տեղի ունեցան 1861 թվին: Այդ առիթով նա կամե-

սպանվածի ընտանիքը, կամ թալանվածը, այլ այդ ամենը դառնում են առիթներ ուսկի երես չը տեսած սուլթանի «սակեալների» համար իբրև փող կորզելու, կեղեքելու յարմար ու պատեհ միջոց:

Գիւրգերը թալանում և սպանում են, ի հարկէ, միշտ հայերին և վերագրում դարձեալ հայերին: Սպանվածին գցում են հայերի հողի վրա և ահա կատարեալ բանաւոր ու աղքատ պատճառ պղտկու, քերթելու, անպատեւու: Հէնց երկէ կեկէ են այստեղ քսան և հինգ հոգի խուսով գիւղերից, որոնք պանդխտու են դէպի ձեռ հիւրընկալ երկիրը: Գրանց Ղարաչօբանի մօտ թալանել են քերտերը, խլել 400 զուրուչ փող, հանել հազիւներ ըտր չորերը և համարեա մերկանդամ բաց թողել: Այդ խեղճերը մուրալով հալիւ հասել են այստեղ ուր մեր պօստատար երկու «սակեալը» բռնել են նրանց բանտն ամ կրել և պահանջում են փող: Մէկից արդէն ստել են 10 զուրուչ, որ հէնց այդ նպատակով հաւաքել էր, միւսների համար հաւաքու են: Ասկեալները պահանջած փողը ստանալուց յետոյ նրանց կարճակեն, և անշուշտ մինչև սա՛ն մանաղուտն հասնելը դեռ մի 10 անգամ էլ կը բանտարկվեն ու կը թալանվեն դարան մտած քերտերից:

Ամեն բանի մէջ տուր ու տուր—ահա անպատեւ ու բազմապատեւ մահմեդականի միակ բան ու գործը և միակ հոգը:

Էն.

նում էր մի փէտօն պատերեց տալ, վրան գրած՝ «համալսարանից վաճառված»։ Ի հարկէ, դա նրա հանգրուանն էր։ Հանգրուանը իր գրականական առաջին փորձերն սկսեց՝ իր հայրենի գաւառից ուղարկված թղթակցութիւններով «Голосъ» լրագրին։ Այդ նա աշխատակցում էր ուսաց դասնական լրագրիներում և ամսագրիներում, և բացի լրագրական յօդուածներէն ունի և մի քանի բէլետրիստիկական լուրջ գրուածքներ, որոնք գրաւեցին ուսու հասարակութեան ուշադրութիւնը։ Վերջին փամանակներս նա գրում էր, «Восое Время» լրագրում։ Տէրտիգորեւ վախճանակց 56 տարեկան հասակում էր։

Անցեալ տարի, յայտնի չլեզական գրող Բիեօրնատիէրնէ-Բիեօրնատի մի բրօշուր հրատարակեց «Միտակութիւն և բազմակութիւն» վերնագրով, որ անպակաս ազնուի հանեց։ Այդ բրօշուրով հըռակաւոր գրողը հրաւեր էր կարգում հիւանդի երիտասարդութեան իր կեանքի կանօն շինել ուղղախոսութիւնը։ Բազմութիւ օրինակներով և գիտնական ապացոյցներով հեղինակը հաստատում է, որ ողջախոսութիւնը անհրաժեշտ է մինչև ֆիզիքական կատարեալ հասունութիւնը և վաղաժամ ամուսնութիւնը փչացնում է մարդկային սեռը։ Այժմեան երիտասարդութիւնը իր սեռական անժուժկալութեան պատճառով իսկապէս բազմակութեան է հետևում, իսկ գիտութեան մէջ վաղուց ապացուցված է, որ բազմակին ազդերը թոյլ, անընդունակ և եռանդից զուրկ են լինում։ Նոյն վիճակին է ենթարկվում և անժուժկալ երիտասարդութիւնը և զրա միակ ճարը այն է, որ երիտասարդութիւնը ժուժկալ մնայ, ողջախոսութիւն ունենայ ու ամուսնանայ միայն ֆիզիքական կատարեալ հասունութեան փամանակ։ Այժմ, այդ գեղեցիկ բրօշուրի հայերէն թարգմանութիւնը լոյս է ընծայվել Բագուի «Արօր» տղարանից։ Թարգմանիչն է Գր. Գիւրջեանց։ Թարգմանութիւնը կատարված է բաւական լաւ, դիւրահասկանալի լեզուով։ Գինն է 15 կօպէկ։ Խորհուրդ կը անք մեր երիտասարդներին անպատճառ կարգաւ այդ բրօշուրը։

Երէկ, յունիսի 21-ին, կովկասի կառավարչապետի դիւանատունը տեղափոխվեց Կօջօր ամբարանօցը։

Թիֆլիսի պօլիցիէստեր Մաստիցկին երկու ամսով արձակուրդ ստանալով, նրա բացակայութեան փամանակ նրա պաշտօնը կը կատարի պօլիցիէստերի օգնական Սօլօուսկի, իսկ այդ վերջինի պաշտօնը կը կատարի պրիստավ Լօւլաձէ։

Մէկկայում խօլերա յայտնվելու պատճառով, բժշկական խորհուրդը անհրաժեշտ համարեց արգելել արտասահմանեան անցադիրների տարը այն ուսուսողատակ մասնատականներին, որոնք ցանկանում են ուխտ գնալ Գէջաւ։

Կոյրերի խնամատար հողաբարձութեան կովկասեան բաժնի խորհուրդը ինքուրով է մեղ տըպել, որ այն անձինք, որոնք կարող են իրանց անբեր վարձու տալ ակնաբուժարանի համար, դիմեն բժիշկ Տարապիէէին, Երմօլօսկի փողոց, սուս իշխ. Աբամելիքեանի, կամ իշխան Արղութեան-Երկայնաբաղուկին, Գօլօվինսկի, սեփական սուս։

Մեղ հաղորդում են, որ սիրողները, զերասան Աբելեանի մասնակցութեամբ, պատրաստվում են մի ներկայացում տալ յօգուտ Մօսկվայի ֆիւհրարմօնիական պարտոսում ուսանող՝ երիտասարդ երգիչ սէնօր Լ. Եղիազարեանի, որը նիւթական օգնութեան է կարօտ, իր երաժշտական ուսումը չարունակելու համար։

Մօսկվայում կազմվում է մի առևտրական ընկերութիւն՝ Լնդելից մինչև Ղաղվին ճանապարհ շինելու նպատակով։ Ընկերութեան կանօնադրութիւնը այս օրերս հրատարակվեց։

Հանգուցեալ Բունդէի տեղ մինիստրների կօմիտետի նախագահ անուանում են Սըրսուտ, Գիւլեանօվին և Չիլաւօվին։

Ռուս լրագրիները հաղորդում են, որ Քիշինեւի հայոց կօնսիստօրիան, կառավարութեան թոյլատրութեամբ, տեղափոխվում է Նոր-Նախիջևան։ Ուրեմն հիմք կայ կարծելու, որ Բեսարաբիայի թեմական առաջնորդը սրանից յետոյ ընակութիւն կը հաստատէ ոչ թէ Քիշինեւում, այլ Նոր-Նախիջևանում։

Մեր քաղաքային ջրանցքի անպէտքութեան շնորհով հաւանօրէն շուտով անջուր կը մնանք, այն էլ սատարի չըբերի փամանակ։ Յունիսի 10-ին քաղաքային ինժեները տեղեկացրեց քաղաքային վարչութեանը, թէ անհրաժեշտ է կառուցումներ սկսել Ալեւայում, որոնց մասին գեկուցումներ են ուղարկվել վարչութեանը մի քանի անգամ, սկսած 1892 թ-ից։ Այդ բանի հիման վրա, քաղաքային վարչութիւնը արտակարգ խորհրդակցութիւն կազմեց յունիսի 16-ին, որ հրաւիրվեցին և տէրինիկ—ձայնաւորները։ Այդ խորհրդակցութեան մէջ պարզվեց, որ քաղաքային ջրանցքը այժման փչացել է, որ եթէ նոր ջրանցք չը շինվի, քաղաքը կարող է մի գեղեցիկ օր բոլորովին անջուր մնալ։ Ի նկատի առնելով այդ հանգամանքը, խորհուրդը որոշեց 21 հալար բուրջ խնդրել դումայից՝ ջրանցքի շինութիւնը բարենորոգելու համար։ Գուման ընդունեց խորհրդի այդ առաջարկութիւնը։

Շուտով կը բացվի Թիֆլիսում Ազով-Գօնեան առևտրական բանկի բաժանմունքը։ Այդ բանկը, «Об. Общ.» լրագրի խօսքով, ի միջի այլոց փոխառութիւններ կը տայ և ապրանքի գրաւականով։

Կառավարչական շրջաններում հերթական է դարձել Պարսկաստանը Ռուսաստանի հետ երկաթուղիական գծով միացնելու հարցը։ Նախագծվող երկաթուղու գիծը, մայրաքաղաքի լրագրիներ խօսքով, պէտք է անցնի Բագուի, Բաշտի և Թարիզի վրայով։

ՇԱՄԱՍԻՈՅ մեղ գրում են. «Ամսիս 11-ին, օրիորդաց դպրոցում, կատարվեց մեր երկսեռ ուսումնարանների տարեկան հանդէսը։ Վարդօք յայտարարած լինելով, հասարակութիւնը բաւական մեծ բազմութեամբ սկսեց հաւաքվել ուսումնարանի դահլիճը, որը շքեղ կերպով զարդարված էր օրիորդների ձեռագործներով։ Հանդիսականների մէջ մեծ տեղ էին բռնել տեղացի հայ կանայք ու օրիորդները, որ ուրախալի է միանգամայն։ Հանդէսը բացվեց երկու ուսումնարանների ուսումնական մասի հաշիւը կարդալով անտեսական մասի վերաբերմամբ մի խօսք անգամ հասարակութիւնը չը լսեց։ Յետոյ ըսկավեց աշակերտուհիների ձեռագործները վաճառումը։ Ինչպէս լսեցինք հաստատ արեւիցի, ձեռագործներից ստացած արդիւնքը եղել է 60 բուրջի։ Հանդիսի փամանակ երգում էր աշակերտուհիների երգեցիկ խումբը, որին ղեկավարում էր Յ. Մարտիրոսեան։ Ձեռագործների վաճառումից յետոյ աշակերտուհիներին բաժանվեց միացականներ։ Հասարակութիւնը բաւական ուրախ տրամադրութեան տակ դուրս եկաւ դահլիճից»։

**ԱՐՏԱՔԻՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ**

**ԹՈՒՄԱ ՀԵՌՐՈՒԹ**

Ռուսաց գործակալութեան հեռագիրը Լօնդօնից, յունիսի 18-ից, հաղորդեց անգլիացի հուշակաւոր քնագէտ Հէօբլիի մասկան լուրը։

Թոմաս Հէօբլի, Անգլիայի ամենահռչակաւոր քնագէտներից մէկը, ծնվեց 1825 թ-ին։ Լօնդօնում բժշկականութիւն ուսումնասիրելուց յետոյ, 1846—50 թ-երին նա մասնակցեց, որպէս կըրտսեր բժիշկ ղէպի Հնդկական ուղիւնուրը և Հընդկական արշիւղաբազը կատարած էկսպէդիցիային։ Անգլիա վերադառնալուց յետոյ նա թագաւորական ընկերութեան անգամ ընտրվեց։ 1854 թ-ին, Լըրտարք Ֆօրբից յետոյ, նա քնագիտութեան ամբիօն գրաւեց Լօնդօնի թագաւորական լեոնային դպրոցում և ֆիզիոլոգիայի ամբիօն արքայական ինստիտուտում։ 1863 թ-ից մինչև 69 թ-ը Հէօբլին անասնաբանի պրօֆէսօր էր բժշկական կոլլեջում։ 1869 թ-ից մինչև 1870 թ-ը նախագահ էր գէօլոգիական և տոնագրական ընկերութիւնների։ Հէօբլին իր գրուածքներով թէ մարիօլոգիայի շրջանում, և թէ մասնաւոր համաստական անասնաբանի մէջ՝ մեծ հուշակ հանեց։ Հանգուցեալ ֆիզիոլոգի գրուածքներից շատերը թարգմանված են եւրօպական և ուսաց լեզուներով։ Նրա ժողովրդական գրուածքներից շատերը նոյնպէս թարգմանված են ուսուերէն։

Կերթիւնների։ Հէօբլին իր գրուածքներով թէ էմբրիօլոգիայի շրջանում, և թէ մասնաւոր համաստական անասնաբանի մէջ՝ մեծ հուշակ հանեց։

Հանգուցեալ ֆիզիոլոգի գրուածքներից շատերը թարգմանված են եւրօպական և ուսաց լեզուներով։ Նրա ժողովրդական գրուածքներից շատերը նոյնպէս թարգմանված են ուսուերէն։

**ՅԵՐԱՍԱԿԱՆ ՊԱՏՊԱՄԱՆՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՂ**

Յրանսիական լրագրիները լի են մանրամասնութիւններով ֆրանսիական պարլամէնտի յունիսի 10-ի նշանաւոր նիստի մասին։ Ինչպէս յայտնի է, այդ նիստի զբաղմունքի աւարկաներից մինն էր Յրանսիայի արտաքին քաղաքականութեան հայոց հարցում ունեցած դերը։

Նախկին մինիստր Ֆլուրանսը ամբաստանում էր մինիստրութիւնը, որ սա հաւատարիմ չէ մնացել 1870 թ-ից ի վեր Յրանսիայի ունեցած արտաքին քաղաքականութեան անանգութեան, այն է չբնաւորեց և խոհեմ լինել և ըրակներ չանել։ Խառնվելով Հայաստանի գործերում, Ֆլուրանսիան ոչ թէ ծառայել է իր սեփական շահերին, այլ կամեցել է միայն մի ծառայութիւն մատուցանել Ռուսաստանին, բայց միթէ զրա փոխարէն, ստեց Ֆլուրանս, չէր կարելի պահանջել, որ Ռուսաստանը օգնի Յրանսիային եզրիտական հարցը կարգադրելու։

Ֆլուրանսի հետ միասին յարձակվում էր կառավարութեան վրա նաև նախկին մինիստր Գօբլէ։

Արտաքին գործերի մինիստր Հանտօ, ինչպէս մենք արդէն հաղորդել ենք «Մշակի» ընկերացողներին, պաշտպանեց կառավարութեան վարած քաղաքականութիւնը, իսկ մինիստր նախագահ Ռիբօ առաջարկեց վստահութեան քուէ տալ։

Պատգամաւորների ժողովը 362 ձայներով ընդդէմ 105-ի՝ ընդունեց պատգամաւոր Տրէլիի առաջարկած բանաձևը, որ հետեւեալն էր. պալատը, հաւանութիւն տալով կառավարութեան յայտարարութիւններին, անցնում է օրակարգին։

Մինիստրութեան տարած այս յարթութիւնը նշանաւոր է համարվում։

**ՆԱՄԱԿ ԵՎ ԼԵՅՈՒՐՈՅԻՑ**

Ճընէվ, յունիսի 8/20-ին

Վերջին փամանակներս գերմանական և ֆրանսիական մամուլը գրեթէ բոլորովին լուր է հայոց հարցի վերաբերմամբ։ Մեր խօսքը խոյոր օրգանների մասին է։

Սօցիալիստական «Vorwärts» լրագիրը մեղադրում է Ռուսաստանի ազնւոններին, սակելով, որ իբր թէ նրանք առաջ բերեցին Սասունի կոտորածները։ Չարմանալի է, խիտ զարմանալի։ Մի օրգան, որ ամեն րօպէ չյանուն ամալված մարդկութեան, յանուն հարստահարվածների է բղաւում, մի այդպիսի օրգան, Լիբլինստի և Բէբլէի նման հակառակի պարագլուխ ունենալով՝ հայոց հարցը ստալարեզ զուրց ոչ թէ պաշտպան հանդիսացաւ հայերին, այլ սկսեց հարուածել դրանց, յանդուգն աղիտութեամբ ամեն ինչ, ամեն ինչ Ռուսաստանին վերադրելով, իսկ հայերին զըրպարեղով աւաղակութեան, ըմբոստութեան մէջ, նրանց ևս աւաղակ, ամբարշտ հրատարակելով ի շարս քերդերի, բաշխուղուկներ... Լիբլինստ, դատաստարտելի ծայրահեղութեան մէջ ընկնելով՝ քիչ էր մնացել արդարացներ նոյն իսկ թիւրքաց կառավարութեանը։ Յանդիմանութիւններ, մինչև իսկ հայհայնքներ ուղղվեցան «Vorwärts»-ի հասցէին։

Բայց ընդհանրապէս սօցիալիստական Եւրօպան մեծ համակրութեամբ վերաբերվեց ղէպի հակական զանգատները։ Օրինակ, Պարիզի «Petit Républicain», Լայպցիգի «Wolks Zeitung», Վիէնայի աւարտիական սօցիալիստական կենտրօնական օրգան «Arbeiter Zeitung» և ուրիշ լրագրիներ ստալարեցին համակրական յօդուածներ, նոյն իսկ ղզացված ճառեր խօսեցին մի քանի տեղ սօցիալիստները։ Վերջին լրագիրը, այն է «Arbeiter Zeitung» ի միջի այլոց ստալարեց մի ընդարձակ հեղքում ընդդէմ թիւրք հիւպատոսներ ի իսկինուացիաների։ Մի համակրական առաջարկ էլ գրել էր ինքը խմբագրապետը բժշկապետ Ալէէ։

Կան դէմօկրատների գլխաւոր օրգան՝ համալսարանային «Frankfurter Zeitung» լրագիրը, ազգային ազատամիտների գլխաւոր օրգան՝ «Kölnische Zeitung», ազա միա նացիօնալ-ազատամիտ թերթերից Միւնխէնի՝ «Neueste Nachrichten», «Allgemeine Zeitung» և ուրիշ ազատամիտ օրգանները։ Բիսմարկի օրգանը՝ «Hamburger Nachrichten» մշտապէս լուս էր, միայն հեռագիրներն էր ստալարում, ինչպէս և Պարիզի «Figaro», «Journal des Débats», և համակրութեան ոչ մի նշան։ Համարեա ոչինչ չեն գրում այժմ, նոյն իսկ «Temps», Libre Parole» և ուրիշ լրագրիները. ընդհանուր լուրթիւն, ոչ մի արձագանք անգլիական լրագրիներին։

«Berliner Tageblatt» լրագիրը կաշառված է սուլթանի կառավարութիւնից։—Հրէաներ են ղեկավարողները։ Կաշառված է համարվում նոյնպէս աւարտիական «Neue Freie Presse»։ Հէնց սկսեցից, երբ հայկական սարսափների լուրերը Եւրօպա հասան, թիւրքաց սակիներէից կուրացած այդ լրագրիները խայտառակ դիրք բռնեցին, բայց վերջինը յետոյ մի քիչ փոխվեց։

Ազատ Եւրօպայի քիչ չը թիւրքաց պլատօնական արտասուքներ։ Սիտա ցաւակցութեամբ և համակրանքով էին խօսում Յիւրիխի «Neue Zürcher Zeitung», «Gazette de Losanne», «Genevois», և ուրիշները։

**Մ. Յ.**

**ՆԱՄԱԿ ՊԱՏՊԱՄԱՆՈՐՆԵՐԻ**

Մարաղա, մայիսի 2-ին

Սուլտուղից մեղ խիտ տխուր լուրեր են հասնում այնտեղի հայերի վերաբերմամբ. տեղի են ունեցել մի քանի առևանգումներ։

Սուլտուղի թիւրք զարափախա տարը սատիկ կերպով լարվել է Մամազ կոչված քիւրք վայրերի ցեղի դէմ, թէ հին ցեղական ստեղծութեան և թէ նորերումս պատահած մի ղէպի պատճառով։

Այս թէ ինչ է այս ղէպը։ Քարվանսարս գերազցի Քէրամի որդուն նոյն գիւղի մի քանի քիւրքեր, վրիժառութեան համար, զրպարտում են, թէ յանդէս է մի քիւրք կնոջ ընտանեկան պատիւը արատաւորել և ուղեցել են քանակածելուց ու կողպտելուց յետոյ էլ, հրացանով գնաւակահարել։ Սակայն, բարեբախտաբար, երիտասարդին աջողվել է մի կերպով փախչել ու ազատվել նրանց ճանկերից։ Քրքերը տեսնելով, որ այդ միջոցով չը կարողացան հասնել իրանց չար ղիտաւորութեան, մի քանի այլ ամբաստանութիւններ էլ իրար վրա ղիզած՝ զանգաւ են սնում ընդհանուր գաւառապետ Հէյրար խանին. սա էլ կարծելով թէ արդար է բողբը, բանտարկում է անմեղ երիտասարդին։

Հէյրար խանը, որ ընակվում է Ռահտանա գիւղում, երեք օրվայ հարցաքննութիւնից յետոյ, անպարտ արձակում է Մաճուլին (այդպէս է երիտասարդի անունը)։ Այժմ կրկին, թէև ազատված, բայց էլի վտանգի մէջ է այդ երիտասարդը, որովհետև Ահմադ ազա Մամազը, քրքերի ցեղապետը, որ ընակվում է Լաճան գաւառում, երկու անգամ պահանջել է երիտասարդին Հէյրար խանից՝ սպանելու այդ գեաւուրին, անհաւատին, որ պէս գրել էր ինքը իր թղթում. — սակայն խանը դեռ ևս չէ յանձնել։

Քրքերը կատարած սկսում են իրանց սխրագործութիւնները նենգութեամբ կատարել հայերի վրա։ Բարանի և Ահմադ գիւղերի ֆեարամի և խամայիլի աղջիկներին բռնաբարելուց յետոյ, փախցնում են Լաճան և քրքացնում. նոյնպէս վարվում են և Նաղաթէի ընակիչ Միրզա խանի կնոջ հետ։ Սպանում են նաղաթէյցի ֆեարամի քրքուն։ Երկու տարի առաջ քրքացած մի հայ գալիս է Նաղաթէ ու Լաճան է տանում իր տանամեայ եղբոր, իր աղայի թեկադրութեամբ, ու նրան էլ այն տեղ քրքացնում։

Իսկ երկու թիւրք ևս քիւրք աշիբէթները—զարափախները և մամազները—մէջ եղած ստեղծութեան ու թշնամութեան բոցերը հետզհետէ բորբոքվում են, լայն ծաւալ են ստանում։

Երկուսն էլ սարափելի յարձակողական ղիւրք են բռնել, այնպէս որ այսօր կամ վաղը, եթէ կառավարութիւնը չը միջամտի, պիտի յարձակում գործեն իրար վրա։ Հետեանքը երկիւղալի է...

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳՐԱՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Կարգավիճակ մի քանի հայերի կողմից մեր լրագրի մասին...

Իսկ մեր վաճառականները զոհաբերություններ կհանեն...

Բայց սա առկա չէր համարվում ճշգրիտ, սեղանակալից...

Եւ այդ այն վաճառականները, որոնք տարեկան 30 հարյուր...

Իսկ մեր վաճառականները զոհաբերություններ կհանեն...

Վերջապահումները քանակապես հրաշքեր են գործում...

Չէր հաստատվում կարգադրել «Արձագանքը» և կը հանդիմանար...

Ամբողջ այն հասարակությունը կարծում էր, որ Պետրոս Մի...

Եւ կամօքն Ամենաբարձրալի, յարություն առածը կերպից...

Կառավարության քաղաքականության վերաբերությամբ...

Ներքին 5% առաջին փոխառութ. 240

5% պետական երկաթուղ. ընթաց. 101 1/2

4% ներքին փոխառություն 99

4 1/2% օրգրաւ. թղթ. ալի. կալ. բանկի 101

Ազն. կալ. Պետ. բանկի խաղաղութ. 210

4 1/2% վկայակ. դեղ. հող. բանկի 101

4 1/2% գրառական թղթեր կալուած. 151

Փոխ. կրեդիտ. ընկեր. մետաղ. 151

Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերության 101

Մոսկվայի քաղաք. օրկրագրասեր. 101

Օրգրաւ. թղթ. 100

Թիֆլիսի 100 99 5/8

Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի 101

ԲՃՇԿԱՊԵՏ ԱՒԵՏԻԲ ԲԱՐԱՅԵԱՆԻ

Բայցակայանի պատճառով

Նրա

ՋՐԱ-ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ

(Սօլջակ, Սերգեյեվի փողոց, № 14)

Ամուսնայ ընթացքում հիւանդներին կընդունին

ԲՃՇԿԱՊԵՏ

ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՊԱՐՈՆԵԱՆՑ

Կանանց և ջղային հիւանդություններին

Ամեն օր, 1-2 ժ. ցերեկվայ և 7 ժ. երեկվայ

Բուժարանում բացի էլեքտրական վանաներից...

ԿԱՐ ԱՆՈՂ ՄԻ ԿԻՆ ցանկալուում է Աբաթուհան կամ Բորժոմ ամառանոց...

Նոյց գնացող մի ընտանիք մտնել: Յանկացողը կարող է զիմել այս հասցեով:

Անիստատի փողոց, Պարոկի առև, № 22: (№ 69) 2-3

ՍԵՒ ԵՒ ՍՊԻՏԱԿ ՊՂՊԵՂ

աղած, մաղող խուփ ունեցող թիթեղայ տուփերում, նոյնպես և թրաշ սրուակներում սեղանի համար, 1/32-ից մինչև 1 Ֆունտ:

Բ. ԿԵՕԼԷՐ և ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Ընկերության գործարանի աղուցքը ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈՂՈՐ նշանաւոր առևտրականների մոտ:

Աղած պղպեղին խառնուրդ անելը այնպիսի սովորական երեցիք է և այնքան չափից անց են կացրել, որ պատրաստ աղած պղպեղ յաճախ աւելի է ծախվում, քան ոչ աղած, ամբողջ պղպեղը: Իսկ Բ. ԿԵՕԼԷՐ և ԸՆԿ. Ընկերության նշանը, ինչպէս բոլորին յայտնի է, ամենաճիշդ գրառականն է այդանքի լաւ յատկութեան համար: (№ 71) 1-2

Լոյս տեսաւ

Ի Վ Ա Ն Տ Ո Ւ Բ Գ Ե Ն Ե Վ Ի

ՄԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(Стихотворения въ прозѣ)

Աշխատութիւնը

Թարգմանեց՝ ԱԼԷԲԱՆԻԿ ԵՍՏՈՒՐԵԱՆ

Գինն է 50 կ. ճանապարհածախսով 60 կ:

Յանկացողները պէտք է զիմեն ԹԻՖԼԻՍ, Կենտրոնական գրապաճառանոցին կամ Թարգմանչին՝ МОСКВА, Новая Басманная, д. Шибаевой, контора М. И. Шоршорова, Александру Цатурянъ. (№ 65) 3-8

Լ. ԽԻՂԻԿԵԼԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՒՄ

Ծախվում է Արխոզով Յովհաննիսեանցի

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԳԻՐԲԸ

Առաջին հատորի գինն է 3 ռ: Երկրորդ հատորի գինն է 4 ռուբլի: (№ 65) 3-3

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԷՐ ՄՆՆԴԱՐԱՐ ԽՄԻՉՔ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար ՆԱՎԱ Ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38). Ծախվում է կօծիկալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մազազիններում 1/2, 1/2, 1/2 և 1/3 կիլոգրամանոց թիթեղայ տուփերի մէջ: (GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անուկերպէի համաշխարհային ցուցահանդիսում 1894 թւին: (№ 151) 40-50

Ա Ջ Դ ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԳՊԱՆՈՑԻ համար հարկաւոր է տեսուչ, որ պէտք է աւանդել շաբաթական 12 դաւ: Յանկացողները թող բարեհաճեն յայտնել իրանց պայմանները հողաբարձութեան մինչև յունիսի 15-ը: 3-3 (№ 64) Աղաթ հողաբարձութեան Գ. ՏԵՐ-ԽՈՉԱՏՐԵԱՆՑ

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 1 օնցիկ վրա 10 ֆունտ արժէ, Բերլինի վրա 100 արժէ, Պարիզի վրա 100 ֆրանկ, Մազապային կուպոններ, Արձաթ, Բորսային դիսկոստ, Պետ. բանկի 5% տուս 1 շրջանի, 2-րդ, 3-րդ, 4% պետական ընտան, 5% օսկեայ ընտան 1894 թ., Արևելեան 5% փոխառ., 2-րդ, 3-րդ, 4-րդ.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like ԳՐՈՂ, "ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ, ՌՈՒՍԱՑ ԳՐՈՒՄԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ, ՊԱՐԻՉ, 18 յունիսի: Սօցիալիստ ժօրէս պատգամաւորների ժողովում հարցապնդում է անում.